

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԻՏԱԿԱՆ ՄԵԾ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԻ

Այն անհրաժեշտ է օգտագործել տնտեսության մեջ՝ ճգնաժամի հաղթահարման համար

Այն մասին, որ Հայաստանը բնական հարուստ պաշարներ չունեցող երկրներից է, ուստի տնտեսության զարգացման համար հիմնականը ինտելեկտուալ կարողություններն են: Այդ մասին խոսում են տարբեր ամբիոններից՝ մատնանշելով, որ անհրաժեշտ է նախ եւ առաջ զարգացնել գիտությունը՝ գիտատար տնտեսություն ունենալու համար: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն առավել հրատապ է դարձնում այս խնդիրը: «Մենք ունենք գիտության ոլորտում խորհրդային տարիներից ժառանգած լավ ավանդույթներ, որոնք հարկավոր է շարունակել: Հայաստանի համար չափազանց կարեւոր է աշխուժացնել կապը փոքր ու միջին բիզնեսի եւ գիտության միջեւ»,—երեկ ասուլիսում ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: ՀԽՍՀ—ում կիրառական գիտությունը տեսակարար ավելի մեծ կշիռ ուներ, քան հիմնարար գիտությունը: Գիտությունը հատկացվող գումարների մեծ մասն ուղղված էր կիրառական գիտության զարգացմանը: Ակադեմիական գիտության վրա ծախսվում էր գումարների 15—20 տոկոսը, բուհական գիտությունների վրա՝ 5—7 տոկոսը, մնացածն ուղղվում էր երկրում կիրառական գիտության զարգացմանը. «ԽՍՀՄ տարիներին համակարգն այլ էր՝ տրվում էին կոնկրետ հանձնարարականներ, իջեցվում էին պետական պատվերներ, կատարվում էին ներդրումներ, եւ արդյունքներն էլ կիրառվում էին: 1970—ականների վերջին կիրառական գիտությամբ զբաղվող հիմնական ինստիտուտներից էին մաթեմատիկական մեքենաների, ֆիզիկայի, միկրոէլեկտրոնիկայի, մեխանիկայի ինստիտուտները, մանրէների ավանդադրման կենտրոնը, որոնք աշխատում էին հիմնականում միութենական պատվերներով»: Ներկայում պատկերն այլ է. կիրառական գիտությամբ զբաղվող ինստիտուտները ստիպված են զբաղվել հիմնականում հիմնարար գիտությամբ: Եվ թեեւ կարող են ունենալ զգալի կիրառական արդյունքներ, սակայն ներդրողներ չունեն: Մասնավոր սեկտորի մեջ բացակայում է վստահությունը գիտնականի եւ գիտական արդյունքի նկատմամբ. «Հայաստանում ներկայումս կան 7500 գիտնականներ, որոնց զգալի մասը բարձր վարկանիշ ունեցող մասնագետներ են: Բացի այդ, ՀՀ—ն իր իրականացրած բազմաթիվ գիտական դրամաշնորհային ծրագրերով բարձր դիրքեր է զբաղեցնում ԱՊՀ երկրների շարքում: Այս ամենը վկայում է Հայաստանի գիտական մեծ ներուժի մասին, ինչը, սակայն, այսօր մասամբ է կիրառվում տնտեսության զարգացման համար»: Ս. Հարությունյանը տեղեկացրեց, որ ԳՊԿ—ն մշակել է ծրագրեր՝ կիրառական գիտությունը զարգացնելու ուղղությամբ. վերամշակվել են գիտության ֆինանսավորման կարգերը, որոնց միջոցով ֆինանսավորվող նպատակային ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացմանը, փորձեր են արվում զարգացնել գիտություն—տնտեսություն կապը՝ մասնավոր սեկտորի ուշադրությունն ուղղելով գիտական արդյունքների վրա: Ծրագրվում են անցկացնել գիտաժողովներ, սեմինարներ եւ ցուցահանդեսներ՝ մասնավոր ներդրողներին գիտական արդյունքները ներկայացնելու համար: Ուսումնասիրվում է

միջազգային փորձը կիրառական գիտությունը զարգացնելու ասպարեզում: «Մանր եւ միջին բիզնեսի ոլորտում մեծ տոկոս են կազմում նաեւ գիտական ծրագրերը, որոնք կյանքի կոչման պահանջ ունեն: Այս պարագայում կիրառական ինստիտուտները պետք է համագործակցեն մասնավոր բիզնեսի հետ: Վստահությունը գիտության ոլորտի նկատմամբ գործարարների մեջ չկա, քանի որ Հայաստանում կիրառական գիտության զարգացման եւ գիտական արտադրանքի համար անհրաժեշտ սարքավորումներ, տեխնոլոգիաներ չկան կամ բավական հին են: Իսկ կիրառական ինստիտուտների հնարավորությունների մասին բիզնեսի ներկայացուցիչներին իրազեկելու համար հարկավոր է հաճախակի կազմակերպել ցուցահանդեսներ, համաժողովներ եւ այլն»,–հավելեց Ս. Հարությունյանը: Համաֆինանսավորմամբ հայաստանյան գիտնականները ներգրավված են մի շարք միջազգային ծրագրերում, սակայն ցավալին այն է, որ այդ գիտական արդյունքը ներդրվում է Ֆրանսիայում, իսկ Հայաստանում՝ ոչ, քանի որ Հայաստանի տնտեսությունը պատրաստ չէ այդ ներդրումներին: «Անհրաժեշտ են կոնկրետ քայլեր, եւ մենք դա իրականացնում ենք»,–ասաց ԳՊԿ նախագահը: Ապրիլի սկզբներին Երեւանում կկայանա գիտության մենեջմենթին նվիրված սեմինար, որին կմասնակցեն տարբեր երկրներից գիտության մենեջեր— մասնագետներ՝ ցույց տալու, թե տարբեր երկրներում գիտության առեւտրայնացման ուղղությամբ ինչ ծրագրեր ու աշխատանքներ են իրականացվում:

Արման ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿԱՌԱՋԱՐԿՎԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒԾՎՈՂ ՀԱՐԿԵՐԸ ՆԿԱՁԵՑՆԵԼ

Մինչև տարեվերջ նախատեսվում է ,Գիտության և գիտատեխնիկական գործունեության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացնել կառավարությանը: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նա նշեց, որ Հայաստանում գիտության զարգացմանը խթանելու համար նախատեսվում է կառավարությանն առաջարկել, որ գիտական ուսումնասիրությունների համար արտասահմանից Հայաստան բերվող սարքավորումների համար մուծվող հարկերը նվազեցնել: ,Սակայն մենք պետք է լուրջ հիմնավորում տանք, որ այդ սարքավորումը զուտ գիտական ուսումնասիրությունների համար է կիրառվելու,- հավելեց նա: Ըստ նրա, այս ֆինանսական ճգնաժամի պայմաններում դա գիտությանը համար կլինի շատ մեծ աջակցություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐ ԿԱՏԱՐԵԼ

,Ֆինանսական ճգնաժամի պայմաններում շատ կարևոր դերակատարում պետք է ունենա գիտությունը: Պետք է հասնենք նրան, որ մեր արտադրողները տեխնոլոգիաները ոչ թե գնեն արտասահմանից, այլ պատվիրեն մեր գիտական հիմնարկներում,- այսօր ասուլիսի ժամանակ ասաց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նա նշեց, որ այսօր Հայաստանում կա 7500 գիտնական, որոնցից 1300-ը մեծ համբավ ու ճանաչում ունեն: ,Նրանց համար շատ քիչ բան է պետք. նրանց պետք է սոցիալական որոշակի պայմանների ապահովում և նպատակամղված ծրագրերի առաջարկություն: Եվ այդ դեպքում նրանք կիրականացնեն բավականին մեծ ծրագրեր,- հավելեց նա:

Անդրադառնալով միջազգային համագործակցությանը, Ս. Հարությունյանը նշեց, որ 1992 թվականից իրականացվել է մոտ 200 մլն միջազգային դրամաշնորհային ծրագրեր, և այժմ հայ գիտնականների գիտական մի շարք արդյունքներն օգտագործվում են դրսում: ,Գիտական արդյունքները երկրների համար կիրառելի են լինում, բան այն է, որ արտասահմանում մեր գիտական արդյունքը ներդրվում է տնտեսության մեջ, մեզ մոտ՝ ոչ: Պատճառն այն է, որ մեր տնտեսությունը պատրաստ չէ մեր գիտական արդյունքները ներդնել,- հավելեց նա:

Սամվել Հարությունյանը նշեց, որ այս տարի Ռուսաստանի, Բելոռուսի, Ֆրանսիայի հետ ունեն պայմանագրեր, որի շրջանակներում համաֆինանսավորման տարբերակով իրականացվելու են գիտական մի շարք ծրագրեր:

Նա նաև տեղեկացրեց, որ այս տարի ապրիլին նախատեսվում է համագործակցության պայմանագիր ստորագրել Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ, որը ներկայումս առավելություն է տալիս ինովացիոն բնույթի ծրագրերին: ,Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը մեզ հետաքրքրող ծրագրերի ֆինանսավորման մոտ 85-90 տոկոսը կվերցնի իր վրա, իսկ մնացածը կվճարվի Հայաստանի պետբյուջեից,- ասաց նա:

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ Հայաստանը շահած դրամաշնորհների ծավալով ավելի առաջ է, քան Ուկրաինան: Նրա խոսքով, այսօրվա գիտության բյուջեի մոտ 30 տոկոսի չափով, Հայաստանը գրանտային ծրագրեր է ստանում արտասահմանից:

,ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵԿՏՈՐԻ ՄՈՏ ԲԱՅԱԿԱՅՈՒՄ Է ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՅՈՒԹՅՈՒՆԸ Ե

,Կիրառական գիտությամբ զբաղվող ինստիտուտներն ստիպված են զբաղվել հիմնականում ֆունդամենտալ` հիմնարար գիտությամբ: Եվ թեև կարող են ունենալ զգալի կիրառական արդյունքներ, սակայն ներդրողներ չունենե,- այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ մտահոգություն հայտնեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նա նշեց, որ այսօր մասնավոր սեկտորի մոտ բացակայում է վստահությունը գիտնականի և գիտական արդյունքի նկատմամբ: Նրա խոսքով, Հայաստանում ներկայում կա 7500 գիտնական, որոնց զգալի մասը բարձր վարկանիշ ունեցող մասնագետներ են: ,Բացի այդ Հայաստանն իր իրականացրած բազմաթիվ գիտական դրամաշնորհային ծրագրերով բարձր դիրքեր է զբաղեցնում ԱՊՀ երկրների շարքում: Սա վկայում է Հայաստանի գիտական մեծ ներուժի մասին, ինչը սակայն այսօր մասամբ է կիրառվում տնտեսության զարգացման համար,- հավելեց նա:

Ս. Հարությունյանի խոսքով, ԽՍՀՄ-ում կիրառական գիտությունը տեսակարար ավելի մեծ կշիռ ուներ, քան ֆունդամենտալը: Նա նշեց, որ այն տարիներին, գիտության հատկացվող գումարների մեծ մասն ուղղված էր կիրառական գիտության զարգացմանը` ակադեմիական գիտության վրա ծախսվում էր գումարների 15-20 տոկոսը, բուհական գիտությունների վրա`5-7 տոկոսը , մնացածն ուղղվում էր երկրում կիրառական գիտության զարգացմանը:

Գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ ԽՍՀՄ տարիներին համակարգը այլ էր` տրվում էին կոնկրետ հանձնարարականներ, իջեցվում էին պետական պատվերներ, կատարվում էին ներդրումներ և արդյունքներն էլ կիրառվում էին: Սամվել Հարությունյանը վստահեցրեց, որ գիտության պետական կոմիտեն այսօր իրականացնում է մի շարք ծրագրեր կիրառական գիտությունը զարգացնելու ուղղությամբ:

Նա նշեց, որ արդեն մշակվել է գիտության ֆինանսավորման կարգերը, որոնց միջոցով ֆինանսավորվող նպատակային ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացմանը, բացի այդ փորձեր են արվում զարգացնել գիտություն-տնտեսություն կապը` մասնավոր սեկտորի ուշադրությունն ուղղելով գիտական արդյունքների վրա:

Ըստ նրա, կիրառական գիտությունը զարգացնելու համար նախատեսվում են անցկացնել գիտաժողովներ, սեմինարներ և ցուցահանդեսներ` մասնավոր ներդրողներին գիտական արդյունքները ներկայացնելու համար: Ս. Հարությունյանը նշեց, որ ուսումնասիրվում է միջազգային փորձը կիրառական գիտությունը զարգացնելու ասպարեզում:

Գիտության պետական կոմիտեի նախագահի խոսքով, այսօր առավել դիպուկ օրինակներ Հայաստանի համար կարող են հանդիսանալ նախկին սոցիալիստական երկրների փորձերը, որտեղ գիտությունը հայտարարված է որպես տնտեսության զարգացման գերակա ուղղություն:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ համաձայն չէ այն տարածված կարծիքի հետ, թե այսօր Հայաստանում գիտությունը, եթե ոչ ճգնաժամ է ապրում, ապա գտնվում է ծայրաստիճան վատ վիճակում: Ըստ Ս. Հարությունյանի, եթե համեմատության մեջ դիտարկենք գիտության վիճակը Հայաստանում և հարևան երկրներում, ասենք՝ Վրաստանում կամ Ադրբեջանում, ապա նման ծայրահեղ դիտարկումների հետ համաձայնելը դժվար է, սակայն այն, ինչ ունեինք խորհրդային տարիներին, այսօրվա հետ համեմատության եզրեր չունի:

Սամվել Հարությունյանի կարծիքով, այն ժամանակ գիտական հետազոտությունները ունեին թիրախային բնույթ, այսինքն՝ գործում էր պետական պատվերի համակարգը, իսկ գիտական հետազոտությունների գերակշիռ մասը պետական պատվերի շրջանակում էր իրականացվում, ինչը վերաբերում էր, հատկապես, կիրառական գիտությամբ զբաղվող հիմնարկներին: Ըստ Ս. Հարությունյանի, այս հիմնարկների բյուջեն ամբողջ գիտության ֆինանսավորման 70%-ն էր կազմում, ֆունդամենտալը՝ 20%-ը, բուհական գիտությունը՝ 5-7%-ը:

Գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ Խորհրդային միության փլուզումից հետո պետական պատվերները ի չիք դարձան, և գիտական ծրագրերի ֆինանսավորումը նվազեց մոտ 20 անգամ:

Ս. Հարությունյանի կարծիքով, եթե խորհրդային ժամանակներում մեր գիտությունը ծառայում էր մեկ հզոր պետության խնդիրների լուծմանը, որոնց ծավալներն ու մասշտաբները ահռելի էին, ապա հիմա խնդիրները փոխվել են:

Սամվել Հարությունյանը նշեց, որ այնպիսի երկրներում, որտեղ առկա են ճգնաժամային կամ ետճգնաժամային իրավիճակներ, հատկապես կարևորվում է գիտության դերը, սակայն նրա կարծիքով, այսօր Հայաստանում գիտությունը մեկուսացած է կրթությունից, խզված է գիտություն-տնտեսություն կապը, գործարարները վստահություն չեն ցուցաբերում գիտնականների և գիտական արդյունքների նկատմամբ: Ըստ Ս. Հարությունյանի, պետք է լինի պետական աջակցություն, որը կշահագրգռի և մասնավոր սեկտորի ուշադրությունը կիրավիրի դեպի գիտական արտադրանքը և արդյունքում հնարավոր կլինի այն ներդնել տնտեսության մեջ:

«Այս առումով մենք անում ենք որոշակի քայլեր՝ կազմակերպում ենք ցուցահանդեսներ, գիտաժողովներ, սեմինարներ»,-ասաց Ս. Հարությունյանը և հավելեց, որ կառավարությունն էլ 2008 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ հաստատել է «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը», ինչպես նաև՝ կառավարության կողմից որդեգրած ծրագիրը՝ ուղղված փոքր և միջին բիզնեսի աջակցությանը, նպաստում է արտադրողների և գիտնականների միջև կապի ստեղծմանը:

Գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց նաև, որ Հայաստանում իրականացվում են միջազգային տարբեր կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրեր՝ մոտ 200 մլն դոլարի, որոնց մի մասն իրականացվում է

համաֆինանսավորման տարբերակով, մի մասը՝ դրամաշնորհային:

«Համաֆինանսավորման տարբերակով մենք մի շարք ծրագրեր ենք իրականացրել Ռուսաստանի հետ, Ֆրանսիայի, Բելառուսի, իսկ երեկ այդ ծրագրերի շրջանակում ես հանդիպեցի Հայաստանում Բրազիլիայի դեսպանի հետ», - ասաց Ս. Հարությունյանը և հավելեց, որ ապրիլին կկնքվի պայմանագիր Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ, տեղի կունենա համաժողով, որին կմասնակցի նաև գիտատեխնիկական կենտրոնի գործադիր տնօրեն Ադրիան Վանդերվիլը, որի համաձայն, Հայաստանը ինովացիոն բնույթ ունեցող ծրագրերը համատեղ իրականացնելու պարտավորություն կստանձնի:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը գտնում է, որ գիտությունը բաց համակարգ է, և առանձին վերցրած փակ երկրում՝ առանց միջազգային կապերի, գիտություն զարգացնել հնարավոր չէ:

«Այսօր Հայաստանը «Միջուկային հետազոտությունների միացյալ կենտրոն»-ի լիարժեք անդամ է, և մեր պետական բյուջեից տարեկան մոտ 85.000 դոլար ենք վճարում, ինչի շնորհիվ արտերկրում ապրող 24 հայ գիտնականների ընտանիքներ զբաղվում են Հայաստանի համար պետական նշանակություն ունեցող ծրագրերով՝ միտված միջուկային ֆիզիկային, միջուկային բժշկագիտությանն ու միջուկային էներգետիկային», - ասաց Սամվել Հարությունյանը և հավելեց, որ դրա արդյունքում Հայաստանը ստանում է 5-6 անգամ ավելի գումար, քան վճարում է:

Ճգնաժամի պայմաններում Հայաստանի կառավարությունը պետք է աջակցի գիտատար արտադրության զարգացմանը

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՐՏԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում Հայաստանի կառավարության խնդիրը պետք է լինի գիտատար արտադրության զարգացման խթանումը: Մարտի 10-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ այս մասին նշեց ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Ըստ Ս.Հարությունյանի, թեեւ այս ուղղությամբ արդեն քայլեր արվում են, սակայն դրանց արդյունքները ի հայտ կգան ավելի ուշ: Մասնավորապես, փոքր եւ միջին բիզնեսի աջակցության ծրագրով փորձ է արվում ֆինանսական աջակցություն ցուցաբերել ինովացիոն ուղղվածություն ունեցող արտադրությանը: Բացի այդ, փոփոխվել է գիտության ֆինանսավորման կարգը, ըստ որի ֆինանսավորվող նպատակային ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացմանը:

Ս.Հարությունյանի կարծիքով, պետությունը պետք է նաեւ ապահովի կապը գիտության եւ տնտեսության միջեւ, մասնավոր ներդրողի ուշադրությունը հրավիրի կիրառական գիտության հետազոտությունների արդյունքների վրա:

Ս.Հարությունյանի խոսքերով, խորհրդային տարիների համեմատ հայկական գիտությունը այսօր ավելի վատ վիճակում է, քանի որ ոլորտի ֆինանսավորումը 20%-ով նվազել է: Սակայն նախկին խորհրդային հանրապետությունների համեմատությամբ վիճակն Հայաստանում այնքան էլ վատ չէ: Ըստ բանախոսի, 1992թ.-ից հանրապետությունում ստացվել են 200 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհներ, իսկ այսօր դրամաշնորհներով ֆինասավորումը կազմում է գիտության բյուջեի 30%-ը: Ս.Հարությունյանը նշեց, որ գիտության տարբեր բնագավառներում իրականացվող հետազոտությունների մի զգալի մաս համաֆինասավորվում է միջազգային գիտական կենտրոնների կողմից:

Финансирование науки будет осуществляться с помощью целевых программ – эксперт

ЕРЕВАН, 10 марта. /Новости-Армения/. Финансирование науки будет в дальнейшем осуществляться посредством целевых программ, заявил во вторник журналистам председатель Национального комитета по науке Самвел Арутюнян.

По его словам, фактически пересмотрен порядок финансирования науки и посредством целевых программ можно будет добиться более эффективного расходования бюджетных средств.

Арутюнян отметил, что во время экономического кризиса государство должно уделять больше внимания науке. Кроме того, нужно развить связь “наука-экономика” и привлечь частный сектор к финансированию науки.

Арутюнян считает, что для увеличения ВВП в странах с ограниченными природными и людскими ресурсами, к которым относится Армения, нужно развивать наукоемкое производство. «Именно этим путем добились экономического успеха Япония и Южная Корея», - сказал он.

По словам Арутюняна, у Армении есть серьезный научный потенциал, и армянским ученым для его реализации нужен минимальный социальный уровень обеспечения и гарантия финансирования научных программ.

Арутюнян считает относительным утверждение некоторых о том, что наука в Армении находится в плохом положении. “Если сравнивать с советским периодом, когда финансирование науки было в 20 раз больше, чем сейчас, то, конечно, в плохом положении. Однако, если сравнивать с другими республиками бывшего СССР, то на удовлетворительном уровне”, - отметил он.

Об этом, по его мнению, свидетельствуют уровень научных работ, проводимых в Армении, в частности в сфере естественных наук, а также количество полученных грантов.

Он отметил, что объем средств, полученных армянской наукой посредством грантов, эквивалентен 30% государственного финансирования науки. Арутюнян также добавил, что, например, по сумме грантов полученных от МНТЦ (Международный научно-технический центр), Армения уступает только России.